

**Հարցաշար**  
**Առարկայական օլիմպիադայի**  
**«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի**  
**Հանրապետական փուլ-2021**  
**11-12-րդ դասարաններ-120 թույլ**

**№ 1-4**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

**1. Հրեշտակի պատվիրանի համաձայն Զաքարիան իր որդուն անվանեց Հովհաննես, որը նշանակում է. (0,5 միավոր)**

- 1) Աստծու շնորհ
- 2) Աստծու պատգամաբեր
- 3) Աստծու ավետաբեր
- 4) Աստծու լույս

**2. Թվարկվածներից ո՞րը Հայ Առաքելական Եկեղեցու այժմ գործող նվիրապետական աթոռներից չէ. (0,5 միավոր)**

- 1) Սսի կաթողիկոսություն
- 2) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն
- 3) Երուսաղեմի հայոց պատրիարքություն
- 4) Աղթամարի կաթողիկոսություն

**3. Ո՞ր կրթական հաստատությունն է հիմնվել 1889 թվականին՝ Խորեն Աշրգյան պատրիարքի և Մաղաքիա Օրմանյանի ջանքերով. (0,5 միավոր)**

- 1) Սկյուտարի հայոց ճեմարանը
- 2) Արմաշի դպրեվանքը
- 3) Մանասարյան վարժարանը
- 4) Կ. Պոլսի՝ Բերա թաղամասի վարժարանը

**4. Ս. Ներսես Շնորհալի եկեղեցին ո՞ր թեմի առաջնորդանիստ կենտրոնն է. (0,5 միավոր)**

- 1) Արթիկի
- 2) Տավուշի
- 3) Գուգարքի
- 4) Գեղարքունիքի

**№ 5-8**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**  
**(1x4= 4 միավոր)**

**5. Հայոց եկեղեցում ----- տոնը տոնվում է հոկտեմբերի 23-29-ի միջև ընկած կիրակի օրը: (1 միավոր)**

6. Բագրատունիների զինանշանի վրա պատկերված ----- ու խաչը համապատասխանաբար խորհրդանշում են աշխարհիկ և հոգևոր իշխանությունը, որոնք երկուսն էլ կենտրոնացած էին Անի քաղաքում: (1 միավոր)

7. ----- նշում է, որ Աստծո գոյությունը կարելի է հիմնավորել բանականության միջոցով՝ «հետևանքներից դեպի պատճառն ապացույցների միջոցով»: (1 միավոր)

8. -----ը գրել է. «Տունը և ընտանիքը մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են, որի նահապետական աթոռին նստում են ծնողները: Հայրն իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի կառավարում են ընտանիքը»: (1 միավոր)

**№ 9-10**

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 6 փաստից

9. Կատարել համապատասխանեցում. (1 միավոր)

1. Լեոնարդո դա Վինչի
2. Եզնիկ Կողբացի
3. Պողոս առաքյալ
4. Իմանուիլ Կանտ
5. Ս. Կյուրեղ Երուսաղեմցի
6. Սենեկա

1	
2	
3	
4	
5	
6	

- ա) «Նրանց աստվածն իրենց որովայնն է»
- բ) «Ով առաքինություն է ցանում, նա փառք է հնձում»
- գ) «Շնորհ տալն Աստծու գործն է, այն պահելն ու պահպանելը՝ քոնը»
- դ) «Առաքինությունից ավելի հարուստ ժառանգություն չկա»
- ե) «Բարոյական լինելու համար միայն խելամտությունը շատ քիչ է»
- զ) «Ընչասիրությունը զուգակից է կռապաշտության»
- է) «Սկզբում բարի բարքեր, նոր միայն իմաստություն, որովհետև առանց առաջինի չի կարող լինել երկրորդը»

10. Կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց գահակալման տարիներին տեղի ունեցած իրադարձություններին: (1 միավոր)

- |                             |                           |
|-----------------------------|---------------------------|
| 1. Ս. Հովհաննես Գ. Օձնեցի   | 6. Ս. Հովսեփ Ա. Հոդոցմեցի |
| 2. Գևորգ Բ. Գառնեցի         | 7. Ս. Սահակ Ա. Պարթև      |
| 3. Ս. Ներսես Ա. Պարթև       | 8. Անանիա Ա. Սոկացի       |
| 4. Սարգիս Ա. Սևանցի         | 9. Սիմեոն Ա. Երևանցի      |
| 5. Կոստանդին Ա. Բարձրբերդցի | 10. Աբրահամ Ա. Կրետացի    |

- ա. Հայոց գրերի գյուտը
- բ. Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Կարս
- գ. Վարդանանց պատերազմը
- դ. Սսի եկեղեցական ժողովի գումարումը
- ե. Դիվանագիտական սերտ հարաբերությունների հաստատումը Նադիր շահի հետ
- զ. Տպարանի և թղթի գործարանի հիմնադրումն Էջմիածնում
- է. Աշտիշատի ժողովի գումարումը
- ը. Անկախ պետականության վերականգնումը, Աշոտ 1-ին Բագրատունու հռչակումը թագավոր
- թ. Կաթողիկոսական աթոռի տեղափոխումն Անի
- ժ. Դվինի եկեղեցական ժողովի գումարումը, պավլիկյան շարժման դեմ պայքարի ծավալումը

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	
10	

**№ 11**

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք**

**11. Ժողովների անվանումները դասավորել ըստ ժողովների գումարման ժամանակագրական (1 միավոր)**

- ա. Շուղրի Կարմիր վանքի եկեղեցական ժողով
- բ. Արտաշատի ժողով
- գ. Սեբաստիայի խորհրդածողով
- դ. Դվինի երկրորդ եկեղեցական ժողով
- ե. Շիրակավանի եկեղեցական ժողով
- զ. Աշտիշատի ազգային-եկեղեցական ժողով
- է. Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողով
- ը. Աղվենի եկեղեցական ժողով
- թ. Շահապիվանի եկեղեցական ժողով

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	

**№ 12-13**

**Աշխատանք սկզբնաղբյուրով**

**12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցին:**

*«Տեր Զաքարիան (Ձագեցին) գնում է տեսնելու Շեխի որդի Հիսեին (Իսա իբն Շայխ), և նրա կողմից մեծ պատվի է արժանանում, վերջինս նրան տալիս է շատ պարզներ, նաև դրոշակ՝ վրան խաչ դնելու և դրանով միշտ իր մոտ մտնելու համար»:*

1. Ու՞մ աշխատությունից է մեջբերված հատվածը:

*(1 միավոր)*

13. «Կարդալ ստորն բերված տեքստը և պատասխանել հարցերին:

(2 միավոր)

«Միհրանյան տոհմի փառքը գագաթնակետին հասցնողը քրիստոնեություն ընդունած Վարազ Գրիգոր իշխանի երկրորդ որդին էր՝ ----- ը: Դառնալով Աղվանքի բանակի հրամանատար՝ նա, միաժամանակ, դեռ հոր կենդանության օրոք, իր ձեռքն առավ ամբողջ երկրի կառավարությունը: Իր այդ գործի համար երիտասարդ իշխանը ժողովրդական հերոս դարձավ: ...Մուսավիա խալիֆը «Արևելքի իշխանին» հանձնեց բոլոր արաբական հողերի կառավարումը մինչև Կովկասի մեծ լեռնաշղթան և մանավանդ հոն-խազարների հետ բարեկամական հարաբերությունների մշակումն ու պահպանումը»:

1. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը:

(1 միավոր)

2. Ո՞ւմ մասին են հեղինակի խոսքերը:

(1 միավոր)

№ 14-15

**Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և պահանջող առաջադրանքներ**

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ:

(0,5 միավոր)

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Ղպտի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպական Ուղղափառ Եկեղեցի, Հույն Ուղղափառ Եկեղեցի, Ասորի Ուղղափառ Եկեղեցի, Հնդկաստանի Ս. Թովմայի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցի

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ:

(0,5 միավոր)

Անանիա Ա. Մոկացի, Գևորգ Բ. Գառնեցի, Խաչիկ Ա. Արշարունի, Պետրոս Ա. Գետադարձ, Խաչիկ Բ. Անեցի, Հովհաննես Ե. Դրասխանակերտցի, Սարգիս Ա. Սևանցի

15.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել սույն շարքին համապատասխանող անունը:  
(1 միավոր)

- ա. Պետրոս, Անդրեաս, Հովհաննես, Փիլիպպոս, Բարդուղիմեոս, Թադեոս, Մատթեոս, Թովմաս, Սիմոն, Հուդա, Ջեբեդուսի որդի Հակոբոս և ...
- բ. Պետրոս, Մատթեոս, Հովհաննես, Պողոս, Բարդուղիմեոս, Թադեոս, Թովմաս, Ղուկաս, Հովսեփ, Հուդա, Ջեբեդուսի որդի Հակոբոս և ...
- գ. Պետրոս, Հովհաննես, Պողոս, Մատաթիա, Փիլիպպոս, Բարդուղիմեոս, Թադեոս, Ղուկաս, Հուդա, Հովսեփ, Ջեբեդուսի որդի Հակոբոս և ...

**15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված:**

*(1 միավոր)*

- ա. Հովհաննես Ե. Դրասխանակերտցի, Մխիթար Գոշ, Սմբատ Գունդատաբլ, Աբրահամ Կրետացի, Ոսկան Երևանցի, Ներսես Լամբրոնացի
- բ. Ստեփանոս Տարնոնցի Ասողիկ, Մամուել Անեցի, Մխիթար Այրիվանեցի, Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Դարանաղցի, Մխիթար Անեցի
- գ. Թովմա Արծրունի, Վարդան Արևելցի, Հովհան Որոտնեցի, Առաքել Սյունեցի, Արիստակես Լաստիվերցի, Գրիգոր Խլաթեցի

**15.3. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը, ավելացնել տվյալ շարքին համապատասխանող եւս մեկ անվանում:**

*(1 միավոր)*

- ա. Էջմիածնի Մայր Տաճար, Արթիկի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Ս. Գեղարդի վանք, Երևանի Ս. Երրորդություն եկեղեցի, Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Էջմիածնի Ս. Գայանե եկեղեցի, Վանաձորի Ս. Նարեկացի եկեղեցի ...
- բ. Էջմիածնի Մայր Տաճար, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Ստեփանակերտի Ս. Աստվածամոր Հովանու Մայր տաճար, Երևանի Ս. Զորավոր եկեղեցի, Երևանի Ս. Աննա եկեղեցի, Էջմիածնի Ս. Հովհաննես եկեղեցի, Վանաձորի Ս. Սարգիս եկեղեցի...
- գ. Էջմիածնի Մայր Տաճար, Էջմիածնի Ս. Հովհաննես եկեղեցի, Ս. Գեղարդի վանք, Երևանի Ս. Զորավոր եկեղեցի, Երևանի Ս. Սարգիս եկեղեցի, Էջմիածնի Ս. Գայանե եկեղեցի, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցի ...

**№ 16**

**Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից (8 x 0,25 = 2 միավոր)**

- ա. Պատմաճարտարապետական ո՞ր հուշարձաններն են պատկերված
- բ. Նշել դրանցից յուրաքանչյուրի գտնվելու վայրը:



1.



2.



1. ա \_\_\_\_\_

բ \_\_\_\_\_

2. ա \_\_\_\_\_

բ \_\_\_\_\_

3. ա \_\_\_\_\_

բ \_\_\_\_\_

4. ա \_\_\_\_\_

բ \_\_\_\_\_

### 17. Շարադրանք

(2 միավոր)

1. Թվարկե՛ք Հայոց եկեղեցու խորհուրդները: Ներկայացրե՛ք Ապաշխարության խորհուրդը. խորհրդի իմաստը, կարգը:
2. Ի՞նչ գիտեք հայ զինվորականության պատվո վարքականոնի մասին, որո՞նք են այդ վարքականոնի ութ գլխավոր պահանջները:
3. Ո՞րն է պատարագի խորհուրդը: Ներկայացնել պատարագի հիմնական մասերը:
4. Ներկայացրե՛ք «Անկախ ազգային պետականություն» հասկացությունը: